

ՅԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՐՆԱԳԻՐԸ.

Պողոսի Գոհաբանության և Աղոթքի քիազմը
Կողոսացիների շարք. Գլուխ 1 #4

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ/ՅԱՋՈՐԴԻՎ.

Մի կաղապար կա: Աղոթելն ու շնորհակալությունն հայտնելը չի նշանակում, որ մենք դառնում ենք կոշտուկներով ծնկներով, վիտրաժային արտաքինով ինքնահավան մարդիկ, ում միակ արածը «ես հեսա կաղոթեմ» ասելն է և քսանչորսժամյա օրվա քսան ժամը (կոպիտ չափազանցություն եմ անում) մարդկանց համար աղոթելով անցկացնելն է: Բայց դա կօգներ եկեղեցին ավելի լավ ժամանակների վերադարձնել:

ՅԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

Եվ այսպես, կանգ ենք առել Կողոսացիների վրա: Սա չորրորդ հաղորդագրությունն է: Կողոսացիները Աստվածաշնչի հիսունմեկերորդ գիրքն է, բացկացած է չորս գլխից, եթե ձեզ հետաքրքիր է, 95 խոսքերը և 1,998 բառերը կազմում են նամակը: Օ՛Ֆ: Եվ այսպես, այն, ինչ ուզում եմ՝ այսօր անենք, հետևյալն է, ուզում եմ նայենք մի հաջորդականության, և ես կկարդամ առաջին խոսքից, ավելի կոնկրետ՝ մինչև մոտ 14-րդ խոսքը, և ուզում եմ, որ մի բանի ուշադրություն դարձնեք: Յետո ցույց կտամ այն: «Պողոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովը, եւ Տիմոթէոս եղբայրը.

Կողոսայում լինող սուրբերին եւ հաւատացեալ եղբայրներին Քրիստոսումը: Ծնորիք լինի ձեզ հետ՝ եւ խաղաղութիւն Աստուած մեր Յօրիցը՝ եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը:

Գոհանում ենք Աստուածանից եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Յօրիցը՝ ամեն ժամանակ ձեզ համար աղօթք անելով.

Երբոր լսեցինք ձեր հաւատքը, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի վերայ, եւ սերը՝ որ դէպի ամեն սուրբերն ունիք.

Այն յոյսի համար՝ որ պահվում է ձեզ համար երկնքումն, որի համար առաջուց լսեցիք ավետարանի ճշմարիտ խօսքովը.

Որ հասաւ ձեզ, ինչպէս ամեն աշխարհի մէջ, եւ պտուղ է բերում, ինչպէս ձեր միջումն էլ, այն օրիցն հետէ՝ որ լսեցիք եւ Աստուծոյ շնորհքը ճանաչեցիք ճշմարտութիւնով:

Ինչպէս էլ սովորեցիք եպափրասիցը՝ մեր սիրելի ծառայակցիցը, որ ձեզ համար Քրիստոսի հաւատարիմ պաշտօնեայ է,

Որ էլ պատմեց մեզ ձեր սերը հոգով:

Նորա համար մենք էլ այն օրիցը հետէ որ լսեցինք, չենք դադարում ձեզ համար աղօթք անելուց եւ խնդրուածք մատուցանելուց որ լցուիք նորա կամքի գիտութիւնովը, ամեն

իմաստութիւնով եւ հոգեւոր հանճարով.

Որ դուք գնաք ինչպէս արժանի է Տիրոջը, ամեն բանի մէջ հաճոյ լինելով նորան, ամեն բարի գործով պտղաբեր լինիք եւ աճիք Աստուծոյ գիտութեան մէջ.

Ամեն զօրութիւնով զօրացած իր փառքի զօրութեան համեմատ, ամեն համբերութեան եւ երկայնամտութեան մէջ ուրախութիւնով.

Եւ գոհութիւն տաք Զօրը որ մեզ արժանացրեց մասնակից լինելու սուրբերի վիճակին լոյսումը.

Որ փրկեց մեզ խաւարի իշխանութիւնիցը, եւ փոխադրեց մեզ իր սիրելի Որդու արքայութեան մէջ,

Որի ձեռովն ունինք փրկութիւն նորա արիւնովը՝ մեղքերի թողութիւնը.»:

Չետաքրքիրն այն է, որ ես հիմա կարդացի, այսպէս կոչված, ենթաբաժինը, որում մի բանի հետաքրքրաշարժ պահեր կան: Ես առանձնացնում եմ սրանք, քանի որ դրանք մի քիչ անոմալ են: Մի փոքր տարօրինակ են: Ուզում եմ մի բանի ուշադրություն դարձնեք: «Մենք». ես այժմ սրանց վրա եմ շեշտը դնելու: «Մենք շնորհակալություն ենք հայտնում» կամ, օրինակ, այլ հղումներ էլ կան՝ «երբ որ լսեցինք ձեր հավատքի մասին»: Շատ է օգտագործվում «մենք» և «մեզ», «մեր սիրելի ծառայակիցը», «մեզ ձեր սերը հոգով», «մենք էլ այն օրիցը հետէ որ լսեցինք»: Նամակի սկզբից մինչև տասնչորսերորդ խոսքը մենք տեսնում ենք հոգևակի թիվը, այնուհետև նամակը փոխվում է առաջին դեմքով եզակի թվի՝ «ես»: Այնպէս չէ, որ «Օ՛հ, գիտեք, սա այնքան տարօրինակ բան է», բայց սա անոմալ է: Եվ, եթե ուզում եք սարսափելի ձանձրանալ, շատ մեկնաբաններ կարծում են, որ սրան պետք է հատուկ անուն տալ՝ «նամակային հոգևակի»: Վառ: Ինչպէ՛ս է հնչում, չէ՞: Սակայն չգիտեմ, թե ինչու են նրանք փորձում անուն տալ սրան, երբ, իրականում, հոգևակին ինձ բացարձակապէս չի անհանգստացնում, երբ տեսնում եմ՝ «Պողոս՝ Յիսուս Զրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովը, եւ Տիմոթէոս եղբայրը.»: Այսպիսով, ինձ համար պարզ է, որ այստեղ կիրառվող հոգևակին ոչ թե լեզվական է, քերականության մեջ կան հոգևակիներ, որ իմաստ են արտահայտում: Օրինակ, լսել եք, երբ խոսում էի երբայերենում գոյություն ունեցող վեհ հոգևակիի մասին: Օրինակ, Իլոհիմ բառը, որը երբայերեն նշանակում է Աստված, որը հոգևակի թվով է: Եթե ինձ հետ երբայերեն եք ուսումնասիրել, և մենք երբայերենին նվիրված շատ շաբաթներ ենք ունեցել, այդ «յոդ»-ը վերջում ավելացվող «միմ»-ի հետ այն հոգևակի են դարձնում: Դա վեհ հոգևակին է, որը վերաբերվում է Աստծո մեծությանը, որպեսզի դրան այդպէս վերաբերվենք: Բայց այստեղ պարզապէս Պողոսն է և նրա ծառայակից Տիմոթէոսը, երբ նա ասում է «մենք շնորհակալություն ենք հայտնում», «մենք լսել ենք ձեր հավատքի մասին»: Չետաքրքիր է, քանի որ այս բաժնում՝ երրորդ խոսքից սկսած, ներառված «Մենք շնորհակալություն ենք հայտնում»-ը աղոթք է: Այն գոհաբանության աղոթք է, և կարծում եմ, որ հետաքրքիր է, երբ կարդում և տեսնում ենք, թե ինչպէս է Պողոսը ներգրավում Տիմոթէոսին: Ես կլայնացնեի շրջանակը և կասեի, որ նույնիսկ Եպափրասը,

ով հիմնեց եկեղեցին Կողոսիայում և այնտեղ տարածեց Ավետարանը, հետաքրքիր է, որ Պողոսը չի ասում. «Ես շնարհակալություն եմ հայտնում Աստծուն քեզ համար, քո հավատքի համար», այլ ասում է «մենք», և ես կարծում եմ, որ դա շատ կարևոր է: Ահա թե ինչու է սա կարևոր: Գիտեք, եթե վերադառնանք Աստվածաշնչին, եթե մարդիկ իսկապես սկսեին ավելի շատ նայել Սուրբ Գրքին, կտեսնենք, որ այս հոգևոր հովիվը՝ Պողոս հովիվը, և նրա ծառայակիցներ Տիմոթեոսը և Եպափրասը, նրանք աղոթում են, և ամեն նամակ ինչ-որ ուղղում է՝ որոշակի եկեղեցու կամ որոշակի անհատի համար, բայց նա այն այսպես չի սկսում. «Արի ասեմ՝ ինչն ես սխալ արել: Արի ասեմ՝ ինչու ես վատը: Արի ասեմ»: Այլ նա նամակը սկսում է ողջունով, շնորհակալությամբ, և նա ասում է «մենք», ինչը մենք պետք է հաշվի առնենք: Մերօրյա եկեղեցում շատ բան է պակասում: Եվ երբ ես ասում եմ մերօրյա եկեղեցի, ես նկատի չունեմ հենց այս եկեղեցին, այլ ամբողջ քրիստոնեությունը: Գիտե՞ք, լսում ենք՝ ինչպես են մարդիկ ասում. «Օհ, հա, ես կաղոթեմ քեզ համար», այնպես, կարծես, ասեն. «Օհ, արևը դուրս է եկել»: Այդպես են ասում: Նրանք Եժանագին կերպով վատնում են այդ բառերը: Բայց եթե մենք իսկապես անհանգստանում ենք մեր քույրերի և եղբայրների համար՝ կոչենք նրանց Քրիստոսի մարմնով մարդիկ, դուք ավելի շատ մարդկանց կլսեք՝ ասելով. «Մենք աղոթում ենք ձեզ համար: Մենք աղոթում ենք ձեր եկեղեցու համար: Մենք աղոթում ենք հիվանդ մարդկանց համար: Մենք աղոթում ենք, որ դուք լցվեք իմաստությամբ ու գիտությամբ»: Գիտե՞ք՝ ինչ եմ հաճախ տեսնում: Նույնիսկ հոգևոր հովիվների կողմից, և դա ապշեցնում է ինձ. ոչ թե շատ աղոթք, այլ շատ դատապարտում, բազմաթիվ դատապարտող արտահայտություններ, «արեք սա», «մի արեք սա», «Լավ կանեք՝ այսպես անեք», և մատ են թափ տալիս, ասում են՝ «Լավ կանեք՝ պահպանեք օրենքները. ես դրանցից վեր եմ», ինչը գիտեք, թե ինչ է: Մենք բոլորս պետք է փորձենք լուծել այս խնդիրը, և ամենավատ բանը, որ պատահել է, այն է, որ մենք շեղվել ենք ճանապարհից: Մի կաղապար կա: Աղոթելն ու շնորհակալություն հայտնելը չի նշանակում, որ մենք դառնում ենք կոշտուկներով ծնկներով, վիտրաժային արտաքինով ինքնահավան մարդիկ, ում միակ արածը «Ես հեսա կաղոթեմ» ասելն է և քսանչորսժամյա օրվա քսան ժամը (կոպիտ չափազանցությունն եմ անում) մարդկանց համար աղոթելով անցկացնելն է: Բայց դա կօգներ եկեղեցին ավելի լավ ժամանակների վերադարձնել: Եթե մենք ավելի շատ ժամանակ անցկացնեինք աղոթելով, և ես սա ասում եմ բոլոր մարդկանց մասին: Եթե սոցիալական հարթակներին նայենք, պետք է պարզապես ուշադրություն դարձնել, թե ինչպես են մարդիկ իրենց այնտեղ պահում: Եվ ես չեմ ասում սա որոշ հոգևոր հովիվների մասին. կան հավատքի մարդիկ, և կան մարդիկ ովքեր դեմ են հավատքին: Ուղղակի հետևեք մարդկանց պահվածքին, երբ ինչ-որ բան է քննադատվում, երբ կոպիտ բաներ են ասվում, տեսեք, թե ինչպիսի պահվածք ենք նկատում: Այսպիսի պատկեր չենք տեսնում: Այլ կերպ ասած՝ եթե բոլորս մարդկային մարմին ենք, որը հավատքով և Գողգոթայում Նրա արարքով ներգրավված է Քրիստոսի մարմնի մեջ, ապա որտե՞ղ է բացակայող կապը: Ես չեմ լսում, որ մարդիկ ասեն. «Ես շնորհակալ եմ քեզ համար: Ծնորհակալ եմ Աստծուն քո նվիրվածության համար: Ծնորհակալ եմ Աստծուն քո հավատարմության համար: Ծնորհակալ եմ Աստծուն, որ դու նույնիսկ հետաքրքրված ես»: Դա նվաստացուցիչ կերպով չի ասվում, այլ, կարծես, նշանակի. «Ես երախտապարտ եմ»: Բայց տեսեք, թե ինչ է ասվում: Ես քեզ չեմ երախտապարտ. ես Աստծուն եմ երախտապարտ: Դա ինձ ցույց է տալիս, որ Աստված դեռ գործում է այն

ժամանակներում, երբ մարդիկ ասում են. «Դե, ես քո Աստծուն չեմ տեսնում»: Դե, իսկ ես տեսնում եմ: Այնպես չէ, որ ես Նրան որպես ծաղրանկար եմ տեսնում, այլ ես տեսնում եմ Աստծո ձեռքը այն մարդկանց վրա, ովքեր ցանկանում են լսել, աճել և շարժվել այլ գրքով: Եվ երբ խոսում ենք պահվածքի մասին, սիրում եմ այն փաստը, որ այստեղ տարրեր կան, որոնց լավ կանենք, որ բոլորս ուշադրություն դարձնենք, հասկանանք, որ այսօր եկեղեցում խզված կապեր կան: Եկեք այստեղ նայենք, այս խոսքին, քանի որ մի բան կա, որ կցանկանամ ձեզ ցույց տալ: Նախ և առաջ, թույլ տվեք մի բան ցույց տալ այս խոսքի հետ կապված: Այս բառի կենտրոնում հունարենում կարծես նույնն է արվում, ինչ անգլերենում: Մենք կարող ենք կառուցել բառը, ունենք նախածանցներ և վերջավորություններ, բայց սա բայ է, և ես կմասնատեմ այն, քանի որ այն ածանցավոր է: Այսպիսով, eu, որը նշանակում է «լավ», հետո հենց կենտրոնում ունենք բառը, «charis», որից ստանում ենք «շնորհք» բառը: Այն հենց կենտրոնում է: Եվ սրանից երևում է, որ գործ ունենք բայի հետ: Այսպիսով, սա ցուցիչ բայ է, ինչը հիմնականում նշանակում է, որ այն փաստացի է: Այն ներկա ժամանակում է, ինչը նշանակում է, որ կատարվում է հիմա և շարունակվում է. և ակտիվ է. ինչ-որ մեկը այն կատարում է: Ինչ-որ մեկը շնորհակալություն է հայտնում: Ինչու՞ եմ ցույց տալիս մեջտեղում գտնվող այս charis-ը. eucharistoumen, eucharisto, eucharistos, ստանում ենք մեր անգլերենի, երբ մեր կաթոլիկ ընկերները գնում են պատարագի և խոսում են «Eucharist»-ի մասին: Ճի՞շտ է: Դենց այդ բառն է: Իմիջիայլոց, հետաքրքիր է, եթե ուզում եք, մի փոքր լրացուցիչ տեղեկություն տամ ձեզ, թե ինչու են Նրանք սա անվանում Eucharist. պատճառն այն է, որ երբ կարդում ենք այն հատվածը, որտեղ Հիսուսը իր առաքյալներին խմիչք է տալիս և կիսում է հացը, շատ, շատ հետաքրքիր է, որ եթե կարդաք այդ հատվածը, կարծեմ Մարկոսի 11-րդ կամ 14-րդ խոսքն է. ուղեղս այսօր լավ չի աշխատում: Բայց երբ Նա վերցնում է բաժակը, Նա չի ասում. «Շնորհակալությունն հայտնեք բաժակի համար» այս բառով: Նա հուններեն մեկ այլ բառ է օգտագործում շնորհակալություն հայտնելու համար, որը eulogatos-ն է, կամ հենց այդ հատվածում՝ eulogesas-ը, որից ունենք անգլերեն «eulogy» բառը՝ մեկի թաղման ժամանակ Նրա մասին լավ խոսքեր ասելը: Eu՝ «լավ», logia՝ «լավ խոսքեր»: Մենք գովեստի խոսքեր ենք ասում, երբ մեկը մահանում է: Զգիտեմ՝ ինչու ենք սպասում: Մի տեսակ հիմարություն է: Մենք պետք է լավ խոսքեր ասենք, երբ մարդիկ ողջ են, եթե այսքան չար ու խենթ չլինեինք: Այսպիսով, այս բառը, օրինակ, փոճում եմ տարբերությունն դնել բառերի միջև, այս մեկը օգտագործվում է բաժակի համար, երբ ասվում է. «Եվ Նա օրհնեց բաժակը», և երբ Նա շնորհակալություն հայտնեց և տվեց հացը, ահա թե որ բառն է օգտագործվում շնորհակալության կամ գոհաբանության համար: Այս հատվածում երկու տարբեր բառեր կան: Հիմնականում, երբ օգտագործում ենք այս բառը՝ eucharistoumen կամ eucharistos, այն սովորաբար շնորհակալություն հայտնել է նշանակում: Սովորաբար այն ուղղված է Աստծուն, իսկ eulogesas բառը շատ հաճախ օգտագործվում է որպես շնորհակալություն ինչ-որ մարդու, որն է այլ անձի հանդեպ: Հիմնականում այսպես են օգտագործվում այս բառերը: Բայց այս բառի մասին հետաքրքիրն այն է, եթե ես ձեզ ասեի, որ դուք այդպես չէիք կարծի, երբ սկսեիք կարդալ սա, բայց եկեք ինձ հետ աչքի անցկացնենք սա: Այստեղ այդ բառն ունեք. «Մենք գոհություն ենք հայտնում», անգլերենում երեք բառ հունարեն մեկ բառի համար՝ eucharistoumen, և այդ բառը կրկին ենք հանդիպում 12-րդ խոսքում՝ «գոհություն տաք», հետո այդ բառը կրկին ենք հանդիպում երկրորդ գլխում՝ 7-րդ խոսքում՝

«գոհութիւնով»: Յիմա եկեք նայենք 3:15, «եւ գոհացող եղէք» և երրորդ գլխի 17-րդ խոսքը՝ «գոհութիւն տալով Աստուծուն եւ Յօրը նորա ձեռովը», հետո 4-րդ գլխի 2-րդ խոսքը՝ «գոհութիւնով»: Ի սկզբանէ չէիք մտածի, որ շատ շնորհակալութիւն, երախտապարտութիւն ու երախտագիտութիւն կա, բայց դրանք լի են: Եվ քանի որ առանձնացրել եմ այս մեկ բառը, նաև սա կանեմ: Դա բնական է. բնական կերպով տեղավորվում է մեր արածի մեջ: Ես այստեղ մի բառ առանձնացրեցի՝ charis, oh, այն այստեղ է՝ charis: Այս բառը կթարգմանվի որպէս շնորհք, և որպէսզի ձեզ դա ցույց տամ, քանի որ սրանք կապված են իրար հետ: Փաստորեն, ինչն է հետաքրքիր այստեղ, եթէ հետ գնաք, եթէ այս հունարեն բառի հետագծով գնանք պրոտո-հնդեվրոպական հոսքի մեջ, կգտնեք ka բառը, որը կապ ունի սեր, բարութիւն, բարեգործութիւն բառերի հետ, որն էլ, իմիջիայլոց, եթէ հետաքրքիր է, հրաշալի ուսումնասիրութիւն է այն մասին, թէ ինչպէս կարող էին անգլերենի թարգմանիչները շփոթեցնել մեզ՝ «բարեգործութիւն» բառը «սեր» բառի փոխարեն օգտագործելով, որը նույնպէս նույն բառախմբից է գալիս: Սա մեկ այլ պատմութիւն է մեկ այլ օրվա համար: Այժմ, ինչու՞ եմ ես առանձնացնում այն, ինչը eucharistoumen բառի հենց մեջտեղում է՝ charis-ը: Որովհետև, շատ արագ ցույց տամ դա, 1-ին գլխի 2-րդ խոսքում, 1-ին գլխի 6-րդ խոսքում ունենք «շնորհք» բառը, շարունակեք և մնացած շնորհ բառերը կտեսնեք 3-րդ և 16-րդ խոսքերում՝ «գոհությամբ երգելով ձեր սրտերում», և 4-րդ գլխի 6-րդ խոսքը , «Ձեր խօսքը ամեն ժամանակ շնորհքով՝ աղով համեմած լինի», և վերջապէս եզրափակող բառերը. «Յիշեցէք իմ կապանքը. շնորհքը լինի ձեզ հետ», որոնք կտեսնեք 4-րդ գլխի 18-րդ խոսքում: Յետաքրքիր է: Բառերի այս խումբը նամակում շատ տեղ է զբաղեցնում: Շատ անգամներ, երբ փորձում եք պարզել, թէ որն է Եսկան ուղերձը, կա փոխանցվող բառերի ուղերձ, որի մեջ կխորանանք, Քրիստոսի գերակայութիւնն ու մեծութիւնը և եկեղեցու մեջ ներթափանցած որոշ սխալների ուղղումը: Բայց երբեմն պարզապէս նայելը բառերին, որոնք կրկնվում են փոքր նամակի մեջ, ինչպիսին որ սա է, այս չորս գլուխները, կարող է մեզ օգնել որոշակի պատկերացում կազմել այն մասին, ինչը մենք կկոչենք հնչերանգներ, որոնք տեղավորված են նամակի մեջ: Յիմա ուզում եմ նայենք մի բանի վրա, ինչը ձեզ ցույց տվեցի, կենտրոնանալու ենք մի բանի վրա, ինչը կոչվում է քիազմ: Ձեզնից ոմանք, ովքեր վաղուց են ինձ հետ, կիմանան, թէ սա ինչ է: Բայց քիազմը գրական հնարք է, որը հիմնականում օգտագործվում է հին ժամանակներում, բայց ժամանակակից օրինակը կարող էր լինել. «Մարդիկ ապրում են ուտելու՞ համար, թե՞՞ ուտում են ապրելու համար»: Եվ եթէ դա երևար հենց գրավոր տեքստում, դուք դա կտեսնեիք որպէս երկու սիմետրիկ մասերի արտացոլում: Եվ երբեմն, սիմետրիկ մասերի հենց մեջտեղում, պատկերացրեք այն որպէս հայելի, որը արտացոլում է երկու կողմերը, բայց երբեմն՝ հենց մեջտեղը: Օրինակ, եթէ ունենայինք այս արտահայտութիւնը՝ «Ապրել», ես հորինում եմ սա, «Ապրել ուտելու համար», և պարզ տարբերակը կլինէր՝ «Ուտել ապրելու համար»: Սա այնքան էլ հեշտ չի մասնատվում, որովհետև քիազմում հիմնականում ունենում ենք մի քանի արտահայտութիւններ, խոսքեր կամ նախադասութիւններ: Եվ երբեմն, հենց կենտրոնում կունենայինք A, B, C, C, B, A, սա գրական հնարքի այն հաջորդականութիւնն է, որը օգնում է կարդացողին հիշել: Սա հնարք է: Այն ստեղծվել է որպէս հնարք, որպէսզի կարդացողին օգնի հիշել կարդացածը: Բայց երբեմն քիազմի հենց մեջտեղի հատվածը, որն այստեղ է, կկոչվի X: այ դա է քիազմը: Եվ սա ոչ թէ հողմապտույտ ասվածն է, ոմանք կկարծեն թէ բառը

սխալ եմ արտասանում, այլ գազաթ ասվածն է: Այստեղ գազաթը կարող է լինել հենց կենտրոնում՝ ներկայացնելով մի բան, որը այս հայելային հնարքի կենտրոնում բոլորովին նոր միտք է: Մենք այդպիսի օրինակ ունենք մեր նամակում ևս: Ուզում եմ ցույց տալ ձեզ, թե այն ինչպիսի տեսք ունի: Եվ դա անելու պատճառն այն է, որ դա օգնում է մեզ հասկանալ, թե Պողոսը ինչ է փորձում փոխանցել: Դա կօզնի մեզ, եթե քիզվազվազ դիտարկենք 3-րդ խոսքից մինչև 12-րդ խոսք: Եվ այսպես, գնացինք: Մեր հաղորդագրության մեջ A կետը կլինի. «Գոհանում ենք Աստուածանից եւ մեր Տէր Յիսուս Բրիստոսի Զօրիցը»: Դա 3-րդ խոսքն է: Սա կարծ կներկայացնեմ և ամբողջը չեմ գրի: Զաջորդ մասը կլինի սա. «Երբոր լսեցինք ձեր հաւատքը, որ ունիք մեր Տէր Յիսուս Բրիստոսի վերայ». դա քիզվազվազ B կետն է՝ 4-րդ խոսքը: Եկեք մի քանի կարևոր բառեր գրեմ այստեղ: Եկեք գրենք «շնորհակալություն», որը գոհաբանությունն է, ճիշտ է: Երկրորդը կլինի «հավատքը», և ուզում եմ այստեղ մի բան էլ ավելացնել, որին հետո կվերադառնանք: Այս մեկը կլինի հավատք և սեր, դա 4-րդն է: Մեր քիզվազվազ C կետը կլինի այն, թե ինչպես նրանք լսեցին հավատքի և սիրո մասին, «որ դեպի ամեն սուրբերն ունիք»: Եկեք սրանք գրենք որպես 5-րդ և 6-րդ խոսքեր: D կետը կլինի այն, ինչ դուք ևս սովորեցիք. «Ինչպես էլ սովորեցիք Եպափրասիցը՝ մեր սիրելի ծառայակցիցը»: Դա 7-րդ խոսքն է: Դա գրենք մեր քիզվազվազ մեջ: Զետո վերադառնանք C կետին, C-ն մեզ այլ ճանապարհով կտանի: «Նորա համար», թույլ տվեք շրջել սա: Լավ, «Նորա համար մենք էլ», սա դառնում է մեր C կետը: Դա 9-րդ խոսքն է: 9-րդ խոսքը սկսում է հակառակ ուղղությամբ գնալ: Զենց ամբողջը գրեմ, կարծում եմ կկարողանամ կարդալ և ցույց տալ ասածիս իմաստը: B կետը, որը այս քիզվազվազ կլինի 11-րդ խոսքը. «Ամեն զօրութիւնով զօրացած իր փառքի զօրութեան համեմատ, ամեն համբերութեան եւ երկայնամտութեան մեջ ուրախութիւնով»:

Եվ վերջապես A կետը, որը մեզ վերադարձնում է 12-րդ խոսքին, և եթե չեմ սխալվում, կրկին «Շնորհակալություն հայտնելուն»: Եվ այսպես, խոսք 12, ինձ համար կարող է ավելի հեշտ լինել հիմա սա ավարտել և վերընթերցել ու տեսնել արդյոք կարողանում եք ինձ նման տեսնել այդ հաջորդականությունը: Սա ամբողջական հաջորդականությունն է, ինչպես որ նոր արեցի, բայց դուրս եմ գրել, որպեսզի տեսնեք, որ երրորդ խոսքում գոհությամբ ենք սկսում, և տասներկուերորդ խոսքում ավարտում ենք գոհությամբ: Եվ այս ուրվագծերը կարդալիս ինչ ենք նկատում: Կարծես այսպիսի հաջորդականություն լինի՝ դա, դա, դա, դա; դա, դա, դա, դա: Կարծես գրապահոցներ լինեն, իսկ այդ երկու գրապահոցների միջև եղած բովանդակությունը, ըստ էության, այն բաղադրիչներն են, որոնք մենք տեսնում ենք այս գոհաբանության մեջ: Զիմա եկեք պարզեցնենք: Մեր կարդացած գոհաբանությունն ունի յոթ բաղադրիչ: Այս յոթ բաղադրիչները սկսվում են գոհաբանության բայով՝

eucharisto, կամ eucharistoumen, որը ես արդեն բացատրեցի: Այնուհետև կա անձնական օբյեկտ, նա, ում շնորհակալություն են հայտնում. գոհությունն Աստծուն է գնում: Եվ հետո ունենք ժամանակի պարագա այս «ամեն ժամանակ ձեզ համար աղոթք անելով»-ում, որտեղ տեսնում ենք հաճախականություն:

Զետո վերադառնում է դերանվանական արտահայտությանը՝ «ձեզ համար. ձեզ համար աղոթք անելով», ժամանակային մասնիկ, ապա՝ պատճառահետևանքային նախադասություն՝ «Երբոր լսեցինք ձեր հաւատքը»: Այսպիսով, եթե այս ամենը մասերի

բաժանեք, մի քանի բաղադրիչներ կգտնեք, որոնք իրականում շատ կարևոր են: Մենք, մեզնից յուրաքանչյուրը առանձին-առանձին կարող էր նախ և առաջ մի փոքր սովորել՝ առանց Աստծո ներկայությանը շտապելու և Նրա վրա նետովելու: Դուք ստանում եք Աստծո ներկայությունը, սկսում եք աղոթել, սկսեք գոհաբանությամբ: Մտածեք բոլոր այն բաների մասին, որոնց համար Աստծուն շնորհակալ եք, ոչ թե միանգամից սկսեք ձեր ցանկություններն ու կարիքները թվարկել: Ես միշտ մտածում եմ, որ սրանից այնքան բան կարելի է քաղել, որ Նոր Կտակարանի երկու երրորդը գրած վարպետ Պողոս առաքյալն այնքան պարզ է ներկայացնում: Կարող ենք այսպիսի մասերի դա բաժանել: Պողոս առաքյալը շնորհակալություն է հայտնում Յորդ Կողոսիայի հավատացյալների վկայության համար. սա A կետի համար: Պողոս առաքյալը շնորհակալություն է հայտնում Աստծուն սրբերի հանդեպ նրանց ունեցած սիրո համար. սա դեռևս չորրորդ խոսքում է: Նա շնորհակալություն է հայտնում դրախտում պահվող հույսի համար. դա կլիևի 5-րդ խոսքը: Նա շնորհակալություն է հայտնում քարոզված ավետարանի համար. դա 6-րդ խոսքում է: Նա նաև շնորհակալություն է հայտնում Եպափրասի հավատարմության համար, ինչպես նաև՝ Յոզով սիրո համար: Այստեղ շատ բաղադրիչներ կան: Գիտեք, երբ մտածում ենք շնորհակալություն հայտնելու մասին, երբեմն դա մեկ հարթության մեջ գտնվող բան է, օրինակ, երբ զգում եք Աստծո ներկայությունը, սկսում եք աղոթել և ասում եք. «Աստված իմ, շնորհակալ եմ, որ ինձ ազատեցիր այդ քաոսից»: Ու անցնում եք առաջ: Իրականում մենք չենք առանձնացնում այն բազմաթիվ բաները, որոնց համար պետք է շնորհակալ լինենք: Եվ սիրում եմ այն փաստը, որ Թեսաղոնիկացիների մեջ մի հատված կա, որտեղ ասվում է. «Ամեն ինչի մեջ շնորհակալ եղեք»: Նույնիսկ երբ ամեն ինչ թափվել է ձեր գլխին, շնորհակալ եղեք: Գիտեք, սրանք բաներ են, որոնք կարող ենք մոռանալ, դրանք այնքան լավ գիտենք, բայց կարող ենք մոռանալ: Լավ, ինչու՞ եմ շեշտում սա: Որովհետև երբ մասերի էի բաժանում սա, մտածեցի. «Սա շատ հետաքրքիր է»:

Այժմ ուզում եմ պատկերացնեք, մենք Նոր Պողոս առաքյալի և հաղորդակցման նրա ձևի վերաբերյալ շատ տեխնիկական մի բան արեցինք, բայց ուզում եմ մի բան նկատեք: Մինչև որ նա կսկսի խնդիրների մասին խոսել, նա շնորհակալություն է հայտնում: Ուզում եմ ձեզ մի հարց տալ: Սա ավելի շատ հռետորական հարց է: Երբ խնդիրների հետ եք առնչվում, կամ երբ ես եմ խնդիրների հետ առնչվում, երբ տհաճ իրավիճակներում ենք, արդյո՞ք մենք կարող ենք նույնիսկ մտածել այդ իրավիճակներին այլ տրամադրվածությամբ մոտենալու մասին: Պատասխանը հետևյալն է. ես կարծում եմ, որ հավանաբար մենք այնքան սովոր ենք ռեֆլեքսային արձագանքին, որ դա շատ դժվար կլիներ: Բայց եթե մտածեք այդ մասին, նույնիսկ երբ գործ ունենք տհաճ իրավիճակների հետ, Պողոս առաքյալի՝ մարդկանց դիմելաձևից կարող ենք օրինակ վերցնել և սովորել և

ավելի լավ մոտեցում ցուցաբերել առանձին անհատների կամ ավելի մեծ խնդիրների հետ առնչվելիս: Տեսեք, ահա թե ինչու եմ ասում, որ ես երբեք Աստվածաշունչը որպես պարզապես գլուխ կամ խոսք չեմ կարդում: Ես կարծում եմ, որ մենք շատ բաներ կարող ենք քաղել դրանից: Նայեք: Մեկ անգամ էլ վերադառնամ և մեկ անգամ էլ անդրադառնամ սրան, քանի որ մի բան էլ կա, որը նույնիսկ ավելի փոքր է, և ես ուզում եմ առանձնացնել այն: Երբ նա սկսում է գոհաբանությունը, և ես ձեզ ասացի՝ ուշադրություն դարձրեք ուղղությանը. «Աստուածանից եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Յօրիցը՝ ամեն ժամանակ ձեզ համար աղօթք անելով. Երբոր լսեցինք ձեր հաւատքը», և այժմ, երևի հիմա ինձ չեք սիրի, որովհետև ստիպված եմ գրածիս վրա գրել, բայց հեշտ կլինի: «Յավատ», այստեղ երեք բառեր կան՝ «հավատ», «սեր» և «հույս», նայեք դրանց, քանի որ հենց այստեղ՝ այս ամենի մեջ, տեղավորված է եռյակը, որը Պողոս առաքյալը շատ տեղերում է սիրում օգտագործել:

Այստեղ նայեք. «Երբոր լսեցինք ձեր հաւատքը, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի վերայ, եւ սերը՝ որ դէպի ամեն սուրբերն ունիք. Այն յոյսի համար՝ որ պահվում է ձեզ համար երկնքումն»: Այսպիսով, ուզում եմ վերլուծել և այս եռյակի մասին խոսել, որովհետև այս եռյակը ոչ միայն Պողոսի գրվածքի Էպիկենտրոնն է, այլև յուրաքանչյուր քրիստոնյայի Էպիկենտրոնն է: Անկախ նրանից, թե ապրում էիք Կողոսիայում, թե Գլենդելում, կամ որտեղից որ այժմ լսում եք, այս երեք բաղադրիչները, եթե նրանք բացակայում են ձեր հավասարումից, դուք ինչ-որ այլ իրականության մեջ եք ապրում, ոչ քրիստոնեական իրականության՝ հավատ, սեր և հույս: Եթե գնաք և կարդաք, օրինակ, Յոմեացիների 5-րդ գլուխը՝ 1-5 խոսքերը, կամ 1 Կորնթացիների 13-ը, և որտեղ հենց այդ հատվածում Պողոսը, չգիտեմ՝ ինչու են թարգմանիչները անգլերեն «սեր» բառի փոխարեն թարգմանել «բարերարություն», բայց հունարենում «սեր» բառն է: Բայց իմ ասածն այն է, որ Պողոսը այս երեք բաներին կարևորություն է տալիս: «Երբոր լսեցինք ձեր հաւատքը», և ոչ պարզապես «հավատը», ինչպես մարդիկ են ասում, այլ մասնավորապես հավատը առ Յիսուս Քրիստոս, ոչ թե ինչ-որ այլ բան, ոչ ձեր տեղական կառավարության հանդեպ, կամ ձեր կառավարչի հանդեպ, կամ ձեր տեղական կուսակցության հանդեպ, այլ «Երբոր լսեցինք ձեր հաւատքը մեր Տէր Յիսուս Քրիստոսի վերայ», և տեսեք այս երկուսը միասին են հանդես գալիս. «Եւ սերը՝ որ դէպի ամեն սուրբերն ունիք»: Ուզում եմ խոսել այլ մասին: Նախ և առաջ խոսենք այս բառի մասին՝ «հավատք»: Ճատ անգամներ ենք այստեղ ասել. Յավատքը Գործողություն է, որը հիմնված է Յավատի վրա, ճիշտ է, որը պահպանվում է..օհի, ձեզնից ընդամենը տասն էին...Աստված իմ, ի՞նչ է ձեզ հետ կատարվում: «Գետից այն կողմ մի երկիր կա...», ահա թե որտեղ կիրականանա քննությունը, ընկերներ: Լավ, հավատքը Գործողություն է, որը հիմնված է Յավատի վրա, որը պահպանվում է Վստահությամբ. մենք սա անվանում ենք Յավատքի բանաձև: Բայց նա մասնավորապես ասում է, հիշում եք, մենք ուշադրություն դարձրեցինք այդ փոքրիկ հունարեն բառին՝ en, en Christos: Այսպիսով, նրանց հավատն առ Քրիստոս, ոչ թե նրանց հավատն իրենց հանդեպ, կամ հավատն ինչ-որ բանի հանդեպ, ինչ էլ որ լինի, այլ հավատն առ Քրիստոս, այն ժամանակվանից, երբ նրանք լսել էին, ինչն ինձ հուշում է, որ Պողոսը սա առաջնային է համարում, և նա ասում է, թե ինչպես են նրանք ավետարանը ստացել. նրանք ստացել էին ավետարանը: Սկզբում տարօրինակ ոչինչ չկա: Պատճառը. տեսեք,

սա նամակ է, սակայն այնքան հրաշալի կերպով է շարադրված և ոգեշնչված է Սուրբ Յոզով. «Երբոր լսեցինք ձեր հաւատքը մեր Տէր Յիսուս Քրիստոսի վերայ: Յիմա ձեզ կատմեմ այն ամենը, թէ ինչու եք սխալ ճանապարհի վրա, բայց ուզում եմ ասել, թէ որքան շնորհակալ եմ Քրիստոսին ձեր հավատքի համար: Վերադառնանք սկզբին, քանի որ դրա վրա եմ կենտրոնանալու», ահա թէ ինչ է ասում Պողոսը: Կարևոր է, որ մենք հասկանանք սա. այս եռյակը պատահական չէ գրված, քանի որ լավ էր ինչու՞մ այստեղ, կամ շատ այլ տեղերում, ինչպէս ասացի՝ Յոզովագիտների 5-րդ գլխում, 1 Կորնթացիների 13-ում, 1-ին Թեսաղոնիկեցիներում; ամեն տեղ ենք կարդում սրանք: Այս եռյակը հիմնականում հանդիպում է Պողոսի գրվածքներում, և նա ասում է. «Նախ, ուզում եմ ասել, որ շնորհակալ եմ»: Ակնհայտ է, որ նա խոսում և նրանց նամակ է հղում որպէս իրենց հոգևոր հովիվ՝ չնայած որ երբեք չէր տեսել նրանց: Եվ նա ասում է. «Ես շնորհակալ եմ ձեր կենրոնացած լինելու, ձեր...» Ես փորձում եմ «հավատք» բառից այլ բառեր օգտագործել հիմա, «Քրիստոսով և Քրիստոսում ամբողջովին լինելու համար: Ես շնորհակալ եմ»: Դա առաջինն է, քանի որ այս պատճառով տեղի է ունենում հետևյալը: Ձեր հավատքի և Քրիստոսին վստահելու համար, ձեր ունեցած սիրո համար, որը ազապն է, ոչ թէ ֆիլեոն, ազապն է: Դա այն անվերապահ, չհաշվարկված սերն է, դուք չեք հաշվում այն սիրո բարեկամության արժեքը, որ ունեք եղբայրների, Քրիստոսով սրբերի հանդէպ: Դուք չեք կարող պարզապէս ընդգծել այն հավատը, որ մարդիկ ունենն Քրիստոսի հանդէպ, առանց այս փաստն ընդգծելու, և նա անում է դա. նրանք սեր էին տածում սրբերի հանդէպ, և դա ձեզ ցույց է տալիս, որ այն խնդիրները, որոնց նա անդրադառնալու է, պարտադիր չէ, որ կապված լինեն Քրիստոսով նրանց դիրքի հետ: Մենք գիտենք, թէ ինչ է կատարվել: Եթէ խոսելու ենք այս մասին, գիտենք, որ կային մարդիկ, ինչպէս ցանկացած այլ եկեղեցում, ովքեր եկան և սկսեցին այլ վարդապետություն քարոզել:

Այստեղ հայտնվեցին մարդիկ, ովքեր գուցէ կողոսացիների հետ խոսում էին ավելի միաստիկ, գնոստիկ կերպով. «Սա մեզ համար գաղտնի գիտելիք է»: Յրեշտակի պաշտամունք կար, կային շատ մարդիկ, ովքեր ասում էին. «Oh, ոչ, պետք է ուսումնասիրեք օրվա փիլիսոփայությունն ու իմաստնությունը»: Բայց ահա թէ ինչ է նա ասում, ինչն է նա որպէս համար մեկ ներկայացնում, ինչն է այստեղ զագաթնակետը: Սա ամենակարևորն է՝ «Հավատ առ Քրիստոս», «սեր բոլոր սրբերի հանդէպ», և այս վերջինը, որը, կարծում եմ, պարզապէս թաքնված է այստեղ, երբ նա ասում է. «Այն հույսի համար, որը պահվում է ձեզ համար երկնքում»: Նա չի ասում «այն հույսը, որ այժմ ունեք»: Նա չի խոսում Քրիստոսով ձեր փառքի հույսի մասին, այլ «Այն յոյսի համար՝ որ պահվում է ձեզ համար երկնքում, որի համար առաջուց լսեցիք աւետարանի ճշմարիտ խօսքովը. Որ հասաւ ձեզ, ինչպէս ամեն աշխարհի մէջ, եւ պտուղ է բերում»: Այն, ինչ պահվում է ձեզ համար, հույսը, որ պահվում է ձեզ համար երկնքում, նա ապագայի մասին է խոսում: Վերջը այստեղ՝ ներքևում՝ արկղի մէջ չի վերջանում: Ահա թէ ինչի մասին է նա խոսում, երբ ասում է այնտեղ գտնվող ինչ-որ բանի հույսը: Եվ եթէ իսկապէս մտածեք, կարող եք այս ամբողջ դասը մոռանալ, տարբերություն չէր լինի, բայց եթէ մոռանաք այս երեք բառերը, կկորցնեք այն հիմքը, որը որպէս քրիստոնյաներ պիտի ունենանք: Մենք չպետք է, կներեք, բայց պետք է ասեմ սա, որովհետև չափից շատ մարդիկ են գալիս ու իրենց բեռն իմ ուսերին բարդում: Նրանք գալիս ու ասում են. «Դե գիտես, հոգևոր հովիվը, և ուսուցիչը, և մարդ, ով ծառայության մէջ է», և նրանք քեզ

իրենց կարծիքների մի ցուցակ են ներկայացնում: Ճատ բաներ կան, որոնք բացակայում են այսօրվա գաղափարախոսության մեջ, թե ինչ է քրիստոնեությունը կամ ինչպիսին է ենթադրվում, որ պետք է լինի:

Այսպիսով, եթե այս ամենը մի կողմ դնենք, մի քանի բան կասենք, որոնց կարող եմ նայել իմ քիզմի մեջ և տեսնել հետևյալը: Պողոս առաքյալի հղման սկիզբը և վերջը գոհաբանություն է: Արդյո՞ք այդպես եք սկսել ձեր այսօրվա օրը: Եվ արդյո՞ք այդպես եք ավարտելու ձեր օրը: Տեսե՛ք, ես երևույթները մի քանի մակարդակներում կարող եմ տեսնել, և մենք դրանց մասին կարող ենք ամբողջ օրը խոսել: Ես կարող էի մոտակա մի քանի ժամերն անցկացնել այստեղ կանգնած և ձեզ այդ և շատ այլ հարցեր տալ: Այդ իսկ պատճառով ասացի, որ լավ կանենք, եթե ուշադրություն դարձնենք, ոչ թե պարզապես վերլուծենք գրական ոճը կամ գրական հնարքը, այլ նայենք, մի կողմ դնենք աստվածաբանական նրբությունները և պարզապես նայենք: Նա այս հատվածը սկսում և ավարտում է ինչով՝ գոհաբանությամբ, երախտագիտությամբ: Նայե՛ք հատկապես բովանդակությանը: Նա խոսում է հավատքի, սիրո, հույսի, ավետարանի մասին: Նրանք ավետարանն ընդունել են որպես ճշմարտություն: Նա նաև ուշադրություն է դարձնում իր հետ աշխատող մարդկանց հավատարմությանը, ովքեր նրա հետ աշխատում էին անարատ կերպով եկեղեցուն հասցնել հաղորդագրությունը: Եվ նա եզրափակում է կրկին Հայր Աստծուն այս դրության համար գոհություն հայտնելով: Այսպիսով, ինչ եմ ձեզ ասում, կամ ինչպե՞ս եզրափակեմ սա, որպեսզի իմաստը հասկանանք: Այո, քիզմը կարևոր է, քանի որ եթե դրան ուշադրություն դարձնենք, ես երևի դա մեկ այլ \$որումում պիտի անեմ, ոչ այստեղ, որպեսզի ամբողջ քիզմը դուրս գրեմ, որ տեսնեք, և գուցե դա որպես տնային աշխատանք անեք: Եթե նայեք իմ ընդգծած խոսքերին և քիզմի մեջ գտնեք սիմետրիկ բաղադրիչները, կտեսնեք, որ դրանք Կողոսիայում հավաքվածներին ուղղված էական հարցերն են: Եվ ես ուզում եմ, որ սա այստեղ կամ որտեղից որ ինձ լսում եք հավաքվածների համար ևս կարևոր հարցեր լինեն: Ճատ հեշտ է քրիստոնեությունը որպես կանոնների ամբողջականություն ներկայացնել: Ճատ հեշտ է քրիստոնեությունը ներկայացնել որպես «սա արեցի, նա արեցի»: Բայց կասեմ, թե որպես քրիստոնյաներ մենք ինչ դժվարության հետ ենք առնչվում: Առաջին բանը, որ պետք է անենք, և սա նույնիսկ Պողոսն է ասում, այն է, որ պետք է համոզվենք արդյոք հավատքի մեջ ենք: Յուրաքանչյուր անհատի համար շատ հեշտ է մեր ստացած հավատքից շեղվելը, շատ հեշտ է դեպի մարմնավոր կողմ սայթաքելը: Դա առաջինը: Երկրորդ, շատ հեշտ է, և ես ձեզ մի հարց կտամ, բայց այդ հարցն ինքներդ ձեզ պատասխանեք: Ինդրում եմ բարձրաձայն չասել: Ե՞րբ եք վերջին անգամ Աստծուն դիմել ոչ միայն գոհաբանությամբ կամ ձեր օրը գորաբանությամբ սկսելով և ավարտելով, այլ՝ ե՞րբ եք վերջին անգամ նստել և առանց որևէ պատրվակի, առանց որևէ կարիքի սկսել աղոթել ձեր ճանաչած կամ ձեզ հետ կապ ունեցող մարդկանց համար:

Հետաքրքիր է դառնում, որովհետև եթե Աստծո հետ մեր հարաբերությունները զարգացնելիս մենք անցկացնում ենք մեր ժամանակը միայն մեր մասին, մեր կարիքների, մեր ցանկությունների մասին խոսելով, և երբեք ժամանակ չենք ունենում անգ առնել և ասել. «Մեկ րոպե. ես ուզում եմ նստել...» գիտե՛ք, մենք մեր երեխաներին ասում ենք, որ սովորեն երգի բառերը՝ «Հաշվե՛ք ձեր օրհնությունները, անվանե՛ք դրանք հատ առ հատ...» Ինչու՞ է դա փոխվում, երբ մեծանում ենք: Հանկարծ սկսում ենք

մտածել, որ կարիք չունենք այլևս մեր օրհնությունները հաշվել: Գիտեք չէ՞ որոնք են օրհնությունները: Անգիր հիշում եք դրանք, չէ՞: Բա իհարկե: Որովհետև շատ հեշտ է, չէ՞: Ոչ, այդպես չէ: Իրականում պետք է մի պահ կանգ առնեք ու մտածեք այդ մասին: Կարող եք նույնիսկ այնքան մանրացնել, որ ասեք. «Տեր Աստված, շնորհակալ եմ իմ կյանքում եղած այն մարդկանց համար, ովքեր աղոթում են ինձ համար, կամ ովքեր ինձ իրենց մտքերում և աղոթքներում են պահում: Շնորհակալ եմ, Տեր Աստված»: Եթե մտածեմ, նույնիսկ իմ գոհաբանությունը ենթաբաժիններ ունի: Այժմ, ինչ-որ մեկն ինձ լսելիս կարող է ասել. «Ի՞նչ կա որ: Ինչի՞ համար անհանգստանալ այսպիսի մանրուքի համար»: Ես ձեզ կպատասխանեմ: Դա շատ պարզ է: Բազմաթիվ հատվածներ կան Աստվածաշնչում, որոնցում խոսվում է գոհաբանության մասին, բայց կա մեկը, որն ինձ ապշեցնում է, գուցե այն հենց այս գաղափարի շուրջ չէ, բայց ինձ ապշեցնող հատվածում, եթե կհիշեք, բորոտավորներին, որոնց դիպել էր, և նրանցից միայն մեկն է վերադառնում և շնորհակալություն հայտնում: Ե՞րբ եք վերջին անգամ վերադարձել Աստծուն շնորհակալություն հայտելու անգամ նրա համար, որ զիջել է ձեզ: Աստված եկավ այնտեղից, որտեղից եկավ, և թեքվեց իմ անարժան անձի վրա և բարձրացրեց ինձ: Եվ ես ձեզ էլի եմ ասել, սա առաջին անգամը չէ, որ ասում եմ դա: Ես հաճախ կրկնել եմ և հավանաբար դեռ կշարունակեմ ասել սա: Պատկերացում չունեմ, թե ինչու...գիտեք այն երգը՝ Ինչու՞ ես, Տեր: Ես չգիտեմ ինչու Աստված եկավ և դիպավ իմ կյանքին, հեյ, ես չեմ բողոքում: Ոչ մի բողոք: Ոչինչ մի փոխիր: Բայց չգիտեմ՝ ինչու: Ինչպե՞ս: Ի՞նչ եմ ես արել: Եվ դա իսկապես ստիպում է ինձ մտածել այդ երգի մասին. Ի՞նչ եմ ես երբևէ արել Աստծո կողմից բարության արժանանալու համար: Եվ հետո հասկանում եմ, որ հենց այդ պատճառով է. ես ոչինչ չեմ արել, և դուք էլ ոչինչ չեք արել: Փրկության ճանապարհը հավատն է առ Քրիստոս, մեր կյանքերում այդ պարզևը բավարար է: Այսպիսով, վերադառնանք իմ առանձնացրած հատվածներին, որոնցից ևս կարծում եմ կարող ենք սովորել: Ես ոչ թե առանձնացրել եմ երեք կարևորները՝ հավատ, սեր և հույս, որովհետև դրանք դուրս են ցատկել էջերի վրայից: Իրականում, դուք նույնիսկ կարիք չունեք տեսնելու, թե ինչ է իմ Աստվածաշնչում կատարվում: Պարզապես նայեք այն երեք կարմիր նշումներին: Տեսնու՞մ եք:

Լավ, չեք կարող կարդալ՝ ինչ է այնտեղ գրված, բայց այդ երեք բառերն են: Ես դրանք կարմիրով եմ նշել, քանի որ մտածեցի, որ դրանք այդքան կարևոր են՝ այնտեղ թաքնված: Եվ երբ ես ասում եմ սա, նկատի ունեմ, որ կարող ենք ձեր Աստվածաշնչի մի լուսանցքում գրել, և ես արդեն գրել եմ «գոհաբանությունը աղոթքի կարևոր մասն է»: Եվ դրա հիմքերը մի մասից բաղկացած փորձ են դառնում, և ես դա իմացել եմ հավատքով: Եվ այս բաղադրիչները, ինչպես ասացի, կարևոր մաս են կազմում: Բայց եթե շարունակեք կարդալ, երբ նա մեկ այլ բան է ասում. «Եւ պտուղ է բերում. Որ հասաւ ձեզ», նա խոսում է ավետարանի մասին. «Ինչպես ամեն աշխարհի մեջ, եւ պտուղ է բերում»: Թույլ տվեք ասել որ սա մեկ այլ կարևոր մաս է: Նա պարզապես չի ասում. «Լսեցիք, ստացաք, հիանալի է: Դուք հիանալի եք», այլ նա ասում է, որ ինչ-որ բան է կատարվում ձեզ հետ, երբ լսում եք, վստահում եք, հավատում եք. մի բան է կատարվում, որը պտուղ է բերում: Այժմ, գիտեմ, որ կլինեն մարդիկ, հատկապես իմ նոր ունկնդիրներից, գիտեք՝ սովորաբար անում ենք այսպես: Դա կատարվում է, երբ գալիս եք, սկսում եք լսել և աճել: Մտածում եք՝ ինչ է նշանակում պտուղ բերել, երբ նոր եք սկսում հետևել Տիրոջը, և ինչ է դա նշանակում, երբ դա վաղուց եք անում: Ես այսպես

կպատասխանեմ: Նոր հավատավորների համար, գուցե ծիծաղելի թվա այն, ինչ կասեմ, բայց կարծես այսպիսի իրավիճակ լինի. «Արդյո՞ք ավելի լավ տեսք ունեմ: Ես հետևում եմ Տիրոջը. արդյո՞ք ավելի լավ տեսք ունեմ: Արդյո՞ք ավելի լավ եմ ինձ դրսևորում»: Արտաքին գործոններ են, բայց ինչպես գիտենք, այն ինչ փոխվում է, ներսում է: Թույլ տվեք ձեզ մի հարց տալ, և սա կարևոր հարց է, քանի որ այն վերաբերվում է պտուղ բերելուն: Այն պահից, ինչ հետևում եք խոսքին և աղոթում եք, կարողացե՞լ եք, եկեք խոսենք այս երկրորդ կետի՝ սիրո մասին. երբ մեքենա եք վարում, կամ երբ հանրային վայրում եք, գուցե ընկերների կամ ընտանիքի անդամների հետ, կարողացե՞լ եք նայել այն մարդկանց, ում սիրելն այնքան էլ հեշտ չէ, և սիրել նրանց: «Oh, վայ, սա ինձ դուր չի գալիս, չէ՞: Այս մեկն ահավոր է»: Բայց ես հենց դրա մասին եմ խոսում: Տեսեք, փոփոխություն է տեղի ունենում, բայց դուք չեք այն իրականացնում, այլ Աստված: Եվ մենք Աստվածաշնչում տեսել ենք, որտեղ Աստված փափկեցնում է կոշտ սիրտը, բայց մենք այս պտուղ բերելու արտաքին գործոնից չենք սկսում, բայց ես մի բան գիտեմ: Որպես քրիստոնյա վերջին քսանհինգ տարիների ընթացքում իմ բերած պտուղը իմ մասին ճշմարտացիորեն ավելին իմանալն է և գիտակցելը, որ ինձնից եկած ցանկացած բան, եթե իր մեջ լավ որակներ է պարունակում, Աստծո շնորհիվ է, և Նրան հասնող պտուղ է: Գիտե՞ք, մարդիկ հարցնում են. «Ի՞նչ կարող ես տալ Աստծուն»: Ակնհայտ է, որ կարող եք տալ ձեր ժամանակը, կարող եք տասանորդ վճարել, բայց մեկ այլ բան կա, որ ինձնից է դուրս գալիս, և Նրա ձեռքի գործն է, որը հաճելի է Նրան, և որը, իմիջիայլոց, իմ կարծիքով, շատ քրիստոնեական խրատներում բացակայող բաղադրիչն է: Դա, կարծես, դառնում է պտուղը ծառին կախելը, և էլի եք սա լսել: Գիտե՞ք այն պլաստմասե մրգերը, երբ ավելի փոքր էիք, գուցե ձեր մայրը կամ հայրը խոհանոցում ունեին այդ պլաստմասե մրգերից: Չէ՞: Դե ինչ, մեզնից ոմանք մեծացել են պլաստմասե մրգերով: Մեզնից ոմանք նույնիսկ փորձել են ուտել դրանք: Եվ ես ձեզ համար նախկինում էլ եմ այս համեմատությունն արել, կարծես վերցնեք մահացած ծառն ու դրա վրա կախեք այդ պլաստմասե մրգերը. շատ քրիստոնյաներ այդպես են անում: Նրանք կարծում են, որ եթե կարողանում եք տեսնել պտուղը, կարևոր չէ, թե այն ինչպես է այդտեղ հայտվել, այն արդեն Աստծո գործն է: Բայց Աստված ասում է, որ բացարձակապես այդպես չէ: Եթե այդպես եք կարծում, ինչ-որ բան իսկապես խառնվել է ձեզ մոտ: Պտուղը, որը գալիս է, դա է, ըստ էության, Քրիստոսի հանդեպ վստահության արդյունքը, որը կբերի դրանք, և եթե դուք ցանկանում եք պտուղի լիարժեք, ավելի լիարժեք ըմբռնում, Պողոսը խոսում է այդ մասին՝ Յոզու պտղի մասին, թե ինչ պետք է դուրս գա մեզանից: Եվ բանն այն է, որ սա նմանակում չէ: Ծափազանց շատ մարդիկ խրվում են այս մտածողության մեջ, որ նրանք կարող են գալ ու նմանակել, քանի որ հաճախ եմ ձեզ ասել, կարծեմ երբ սովորեցնում էի Եփեսացիներից մի հատված, որտեղ հունարենն թարգմանությունն ասում է. «Արդ նմանող եղեք Աստուծուն»: Սա միշտ համատեքստից դուրս են բերում: Իրականում սա Թոմաս Քեմփիսի մտածողությունն է. «Կարող եք նմանակել, կարող եք ապրել այնպես, կարծես...» Ոչ: Դուք պետք է առաջ գնաք հավատքով՝ Նրան անուղղակիորեն վստահելով: Պտուղն ու փոփոխությունը ներսից են գալու, և ոչ թե այն պտուղն ու փոփոխությունը, որը դուք եք կամենում, այլ այն, ինչ Նա կկամենա անել ձեր մեջ և ձեր միջոցով: Եվ երբ խոսում ենք այս պտղաբերության մասին, ամեն ինչ փոխկապակցված է: Եթե ես հավատում եմ Քրիստոսին, ինչը գործողություն է, որը հիմնված է հավատի վրա, որը վստահությամբ

պահպանվում է, և ես սիրում եմ բոլոր սրբերին, և ես հույս ունեմ ինձ սպասող ապագայի հանդեպ, մի հավիտենական գաղափարի, որին ձգտում եմ, ինչը ըստ էության այն ամենն է, ինչ Քրիստոսն արել է ինձ համար և հավիտենական կյանք խոստացել, ապա կարող եմ նայել այս ամենին և ասել. «Իհարկե ինչ-որ բան պետք է առաջանա, ինչ-որ բան պետք է արտադրվի»: Բայց արտադրողը ես չեմ: Գործողություն կատարողը ես չեմ: Նա է գործում իմ մեջ և իմ միջոցով և ստեղծում է դա: Շարունակեք կարդալ ինձ հետ, քանի որ նա ասում է Եպափրասի մասին. «մեր սիրելի ծառայակցիցը, որ ձեզ համար Քրիստոսի հաւատարիմ պաշտօնեայ է, Որ էլ պատմեց մեզ ձեր սերը հոգով»: Թույլ տվեք կանգ առնել և խոսել այս «հոգով սիրո» մասին: Ես ձեզ ասել եմ, որ, դժբախտաբար, եղել եմ այնպիսի եկեղեցիներում և հանդիպել եմ այնպիսի մարդկանց, ում պատկերացումը սիրո մասին այն անփուլթ ձևն է, որը մեջքից հարված է հասցնում: Դրանից պարզապես փշաքղվում ես: Այստեղ այդպիսի սիրո մասին չի խոսվում: Այն «հոգով սերը», որի մասին այստեղ խոսվում է, ըմբռնող և առաջնահերթություն տվող է. այս նամակում մենք կկարդանք այն մասին, որ Քրիստոսին, հոգով սերը պետք է ամեն ինչից առաջ դնել: Եթե Աստծո Յոզիան, ինչպես ասել եմ նախկինում, դրված է մեր մեջ, Աստծո ավանդն է դրված մեր մեջ, և այն սնուցվում է հավատքով, ինչպես նաև մեր հանդեպ ոչ միայն սրբերի, այլև Աստծո սիրով. սա սկսում է փոխել և վերախոփել անհատին: Վախենալու ոչինչ չկա, ես շատ մարդկանց եմ հանդիպել, ովքեր նոր էին սկսել ծառայություններին գալ, և նրանք մտածում էին, որ իրենցից այնքան տարբեր մեկի են վերածվելու, և որ այդ վերափոխումն այնքան սարսափելի է լինելու, որ վանական են դառնալու կամ այնպիսի փոփոխության են ենթարկվելու, որը չեն ցանկանում:

Բայց երբ սկսում եք վստահել և ապրել Տիրոջ հետ, տեսնում եք այդ Յոզիան, Յոզով այդ սերը, Յոզով վստահող այդ հավատը, Յոզով այդ հույսը, որ սկսում է բազմապատկվել: Եվ հնարավոր է, որ դա ակնհայտ չլինի այլ մարդկանց համար, բայց եթե դուք ինքներդ ձեզ հետ անկեղծ լինեք, դա աստիճանաբար ակնհայտ կլինի ձեզ համար: Ես սա ասում եմ, որովհետև այնքան բան եմ տեսել և լսել:

Որոշ մարդիկ ասում են, որ դա սուբյեկտիվ է: Ոչ, մենք խոսում ենք այն վերափոխման մասին, որը շատ եկեղեցիներ կցանկանային ցույց տալ վկայությունների ծառայություն մատուցելիս: Բոլորդ էլ լսել եք, երբ մարդիկ կանգնում ու ասում են. «Տերն ինձ համար այսինչ բանն արեց. ես այսպիսինն էի, իսկ հիմա ես այսպիսինն եմ»: Այո, բայց Տերը դեռ պետք է աշխատի քեզ վրա, այնպես որ նստիր: Դու դեռ տեղ չես հասել: Այ դա է այսպիսի իրավիճակներում խնդիրը: Հրաշալի է Աստծուն փառք տալը, բայց այս վկայությունները, ըստ էության, նրանք իհարկե վերագրում են դա Աստծուն, բայց մեծամասամբ, կարծես, ասում են. «Տեսեք: Աստված իր գործն արեց: Տեսեք: Տեսեք: Տեսեք: Տեսեք»: Ոչ, ոչ, դուք սխալվում եք: Աստված իր գործը դեռ չի վերջացրել, քանի որ սրանք՝ այդ ուղղումները, կատարելը հեշտ էր: Դժվար բաները դուք չեք կարող տեսնել, և դրանք թաքնված են այստեղ և այստեղ: Դրանք այն բարդ կողմերն են, որ Աստված պետք է փոխի: Բայց շարունակեք կարդալ: Այժմ նա ասում է՝ 9-րդ խոսքում. «Նորա համար մենք էլ այն օրիցը հետո որ լսեցինք, չենք դադարում ձեզ համար աղօթք անելուց եւ խնդրուածք մատուցանելուց որ լցուիք նորա կամքի գիտութիւնովը, ամեն իմաստութիւնով եւ հոգեւոր հանճարով», այնպես որ եկեք մանրամասները սրանք: Շատ բաներ կան, որոնք համար նա աղոթում է.

«Խնդրուածք, որ լցուիք նորա կամքի գիտութիւնովը»: Ե՞րբ եք վերջին անգամ աղոթել որևէ մեկի և ոչ ձեզ համար, որ «լցուիք նորա կամքի գիտութիւնովը, ամեն իմաստութիւնով եւ հոգեւոր հանճարով»: Երբևէ որևէ մեկի համար այդպէս աղոթե՞լ եք: «Որ դուք գնաք ինչպէս արժանի է Տիրոջը, ամեն բանի մէջ հաճոյ լինելով նորան», և կրկին «ամեն բարի գործով պտղաբեր լինիք եւ աճիք Աստուծոյ գիտութեան մէջ. Ամեն զօրութիւնով զօրացած իր փառքի զօրութեան համեմատ, ամեն համբերութեան եւ երկայնամտութեան մէջ ուրախութիւնով»: Միայն այս բաժնում ես հաշվեցի տասնմեկ, գուցե տասներկու բաղադրիչ, բայց իրականում կարող եք տեսնել, թէ ինչի համար է նա աղոթում: Նա չի ասում. «որ ձեր բանկային հաշիվը լցվի» կամ «որ նոր Ռոլս Ռոյս վարեք» կամ «որ քսան տարով ավելի երիտասարդ տեսք ունենաք» կամ ավելի նիհար կամ ավելի գեր կամ ինչ-որ նման բան. մակերեսային, սոցիալական, անկարևոր բաներ, որ նետվում են մարդկանց մեծ մասի վրա քրիստոնէական աշխարհի քողի տակ: Բայց նա ասում է, որ ահա այս բաներն են կարևոր: Եվ ես սիրում եմ այն փաստը, որ այս աղոթքում, եթէ կարդաք և մանրամասնեք նրա ամեն ասածը, այս յուրահատուկ բառերը, որոնք նա ամեն օր է օգտագործում, որ լցվեք գիտությամբ, լինեք պտղաբեր, հզորացած: Որ ոչ միայն ուշադրություն դարձնեք բաղադրիչներին, այլև այն բոլոր ածականներին, որոնք նա օգտագործում է այս հավատացյալների նկատմամբ, և մտածեք. «Ես ինձ համար էլ կուզեի այդ աղոթքն անել»: Բայց գիտե՞ք ինչ: Ես ուզում եմ այդ աղոթքն անել այլ մարդկանց համար ևս: Ինչպե՞ս պետք է աճենք որպէս մարդ, եթէ հոգ ենք տանում միայն ինքներս մեր մասին, եթէ մեր հոգևոր աղոթքը մեզ համար է. ինչպե՞ս պետք է աճենք որպէս մարդ, եթէ չենք աղոթում մեզ շրջապատող մարդկանց համար: Այսպիսով, ես այս ամենը գոհաբանության այս գրապահոցների վերնագրի տակ եմ դնում: Մենք շնորհակալություն ենք հայտնում, գոհանում ենք Յորից, և ես ձեզ սա ասում եմ որպէս մարդ, ով մեծագույն երախտագիտությամբ է այստեղ կանգնած, ես շնորհակալ եմ Աստծուն, որ կարող եմ ամեն շաբաթ կանգնել այստեղ, կարող եմ ավելին ուսումնասիրել: Ինչպէս ասել եմ, երբեմն որոշ դասեր շատ բարդ կլինեն: Որոշ դասեր այսօրվա պէս կլինեն, երբ ես փորձում եմ շատ չխորանալ լեզվաբանության մեջ, բայց դա կապ չունի: Ամեն բանի համար, որ ես այս շաբթում տեսնում եմ, շնորհակալ եմ Աստծուն, որ կարողանում եմ բացատրել Սուրբ Գրություններն ու սովորել: Եվ գուցե այսօր մի փոքր ավելի թեթև ուսուցանում էր, բայց ես գիտեմ, որ մենք բոլորս կարիք ունենք այս բաղադրիչները մերը դարձնելու: Նախ, ես դրանց նայում եմ որպէս խոսքերի, որ Պողոս առաքյալն ուղարկել էր Կողոսիա: Երկրորդ, ես փորձում եմ տեսնել, թէ ինչպէս կարող եմ այսպիսի աղոթքն ու գոհաբանությունն օգտագործել ոչ միայն ինձ, այլև ինձ շրջապատողների համար: Եվ ես շատ երախտապարտ եմ այն փաստի համար, որ ինձ լսող շատ մարդիկ կան, ովքեր նայում են այս խոսքերին և որպէս քրիստոնյա ճիշտ հիմք ունեն՝ հավատ առ Քրիստոս, սեր սրբերի հանդէպ և հույս ինձ և ձեզ սպասվելիքի հանդէպ, որին պետք է ձգտենք: Այստեղից նամակի մեջ շրջադարձ կա: Եվ չնայած նրան, որ ես շատ բարդ թարգմանություններ ունեմ, որոշել եմ այսօր դրանք չանել: Խնդրեմ: Բայց մենք կանդորադառնանք որոշակի ուղղումների և որոշ թարգմանության, սակայն ուզում եմ, որ այսօր այստեղից հեռանաք՝ մտածելով, որ նամակն ուսումնասիրելու ընթացքում կարող ենք Պողոս առաքյալից մի հատված վերցնել, և գուցե այսօր լինի առաջին օրը, երբ կսկսեք հաջորդականությունը ձեզ համար, կամ գուցե արդեն անում եք այդպէս, չգիտեմ, բայց եթէ չեք անում, այսօր

կարող էր առաջին օրը լինել: Ի՞նչ կլինի, եթե Աստծուն մեր բոլոր տիպի հրավիճակների ու խնդիրների մասին ասելուց առաջ Նրան նախ շնորհակալություն հայտնենք: Նրան դիմել և այն լավ շնորհը՝ eucharistoumen, լավ – eu, շնորհ – charis, որն այստեղ թարգմանվում է որպես գոհաբանություն, շնորհակալություն հայտնել Նրան այն բաների համար, որոնք կարծում եք, թե «Բայց ախր Նա արդեն գիտի դա»: Ես շնորհակալություն եմ հայտնում, հետև ձեզ օրինակ կասեմ, թե ինչ է այժմ մտքովս անցնում, ես շնորհակալ եմ, որ Աստված ոչ միայն ինձ այսօր արթնացրել է և նոր օր է պարզել՝ շունչ տալով թոքերիս, ինձ խոսելու հնարավորություն տալով և Աստծո խոսքը տարածելու ցանկություն տալով, այլ նաև շնորհակալ եմ ինձ ամեն ինչին դիմանալու համար այսքան առատ համբերություն տալու համար: Ես կասեի, որ Աստված ինձ սիրելու կարողություն է տվել նույնիսկ այն պահերին, երբ գրեթե անհնար էր: Եվ ես այս ամենն ասում եմ, որպեսզի կարողանաք ձեր կյանքի հարթություններին նայել և նայել այն կյանքին, որի նպատակի համար Աստված ընտրել է ձեզ, և հասկանաք, որ սա կյանք է, որի համար արժե վերադառնալ և չլինել այն մարդկանց պես, ովքեր հետ չեկան և «շնորհակալ եմ» չասացին: Եվ, ինչպես քիչ առաջ ասացի, լավ կանեք, եթե հետ գնաք և կարդաք Ավետարանի այն հատվածը, որտեղ խոսվում է այ մասին, թե ինչպես էր Տերը բժշկում: Եվ միշտ այսպես է: Մենք այն Աստվածաշնչյան պատմություն դարձնելու սովորություն ունենք: Նա բժշկեց նրանց, և միայն մեկ բորոտը վերադարձավ շնորհակալություն հայտնելու: Արդյո՞ք դուք այդ մեկ բորոտն եք: Որովհետև ես իմ փոխարեն կարող եմ ասել, որ ես այդ մեկ բորոտն եմ, և դա ինձ համար նվաստացուցիչ չէ: Նա ընտրեց ինձ, Նա փրկեց ինձ, Նա մաքրեց ինձ, Նա սիրեց ինձ. շնորհակալ եմ, Տեր, քանի որ ես գիտեմ, որ արժանի չեմ, բայց ես արժանի եմ դառնում Քո անգին Որդու՝ Հիսուս Քրիստոսի թափված արյամբ: Դա գոհաբանության արժանի է: Ամեն օրը կարող է այդպես սկսվել և ավարտվել. Պողոսի գրած նամակից մի մտքով: Եվ ինչպես ասացի, մյուս շաբաթ շատ խորացված թարգմանություն ենք անելու, այնպես որ այսօր ձեզ համար ընդմիջում էր: Պատրաստ եղեք հաջորդ շաբաթ, և կարող եք խմել գլխացավի ձեր բոլոր դեղերը կամ ինչ ձեզ անհրաժեշտ է, նախքան եկեղեցի գալը: Բայց դա մենք կանենք հաջորդ շաբաթ, իսկ այժմ կարող եմ ասել, որ այսօրվա հաղորդագրությունն է լինել շնորհակալ և չմոռանալ մեր քիզամի այն երեք բաղադրիչները, որոնք մեզ ստիպում են կանգնել և ասել. «Տեր, շնորհակալ եմ ինձ ընտրելու համար, իմ սիրտը սիրով լցնելու համար, և գալիքի համար հույս տալու համար: Կարիք չկա, որ մտածեմ, թե անհայտ կա. Դու կատարելապես պարզ կերպով հասկացրել ես, թե ինչ է ինձ սպասվում իմ հավատքի մեջ, և ես շնորհակալ եմ Ձեզ դրա համար»: Ահա իմ ուղերձը:

ՎԵՐՋԱԲԱՆ.

Դուք հետևում էիք ինձ՝ հոգևոր հովիվ Մելիսա Սքոթին, ուղիղ հեռարձակմամբ Գլենդելից, Կալիֆորնիայից՝ Հավատքի Կենտրոնից: Եթե ցանկանում եք մեզ հետ ծառայության հաճախել, կիրակի առավոտյան ժամը 11-ին, պարզապես զանգահարեք 1-800-338-3030 հեռախոսահամարով, որպեսզի ստանաք ձեր անցագիրը: Եթե հավելյալ ուսումնառություն եք ցանկանում, այցելեք մեր կայքը, հասցեն է՝ www.PastorMelissaScott.com: